

## ՀՈՅ ՆԱՀԱՊԵՏԱԿՈՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ\*

(Ցեսութիւն նայ ոռվարութական իրաւունքից)

VII

Նախորդ գլխում տեսանք, թէ հայրիշխանութիւնը զարգանալով առանձնայատուկ սոցիալ-տնտեսական պայմաններում, ամփոփում է իր մէջ ընտանեկան կազմի այնպիսի գաղափար, բովանդակում է այնպիսի ըմբռնումն գերդաստանական յարաբերութիւնների, որ միանգամայն ակնյայտնի ու բնական է դառնում կնոջ ստորագրեալ գրութիւնը ընտանիքի մէջ։ Հենց այն փաստն, որ ամուսնութիւնը հայ նահապետական գերդաստանի շրջանում կատարւում է գլխաւորապէս գնմամբ ու մասամբ առևանդմամբ, ցոյց է տալիս, որ կին-մարդու վրայ նայում են իրեւ իրաւանց առարկայի, իրաւագուրկ անձի վրայ \*։ Կնոջ մասին ունեցած այդ իրաւաբանական գաղափարը մանաւանդ խիստ ցայտուն աչքի է զառնում Աբարանի հայերի հայեացքներում։ այստեղ, եթէ հարսը այրիանալուց յետոյ նորից ամուսնանայ, պէտք է նոր ամուսինը զալան (գնման գումարը) վճարէ, բայց ոչ հարսի ծնողներին, այլ նախկին ամուսնու ընտանիքին \*\*։ Միակ նշանակութիւնը, որ ունի կինը իր ամուսնու համար այդ նախ՝ այն է, որ ծառայում է ագնատական, հօրական զարմի յարատեմանը, որդիներ ծնելով իր ամուսնու համար և երկրորդ՝ այն է, որ իրեւ բանուոր, աշխատաւոր ձեռք անհրաժեշտ է գերդաստանի տնտեսական գործունէութեան մէջ, ընտանեկան նիւթական գոյքն հարստացնելու համար։

Կնոջ իրաւագրկութիւնը արտայայտում է ամուս-

\* Այդ հարցի մասին մանրամասն տես մեր յօդուածը՝ «Գնմամբ և առևանդմամբ ամուսնութիւն»։ — Ազգագրական հանդես, 1905 թ. XII հատ. եր. 40—83։

\*\* Գարեգին սըկվ. Յովսէփեան—Փշրանքներ, եր. 53։

նական կեանքի բազմաթիւ կողմերում։ Կին մարդը մասնակից չէ գերդաստանի այն հասարակական կեանքին, ուր հանապազ և միմիայն տեղ ունին այր-մարդիկ։ Կինը ձայն չունի ընտանեկան այն խորհրդներում, որտեղ մասնակից է իր ամուսինը։ Ընդհանրապէս այն բոլոր յարաբերութիւնների արտաքին ձևերը, որոնցով ընորոշւում են այր մարդկանց վերաբերմունքը դէպի իրենց կանայք, նաև հապետական գերդաստանում պարզ են կացուցանում։ Թէ ինչպիսի ստորագրեալ աստիճանի վրայ է կանգնած կինն համեմատաբար իր ամուսնու հետ, որը կոչում է նրա զինատէր (Բօրչալիում)։ Կնոջ ընտանեկան փակ կեանքը, որով նա իրաւունք չունի խօսելու ոչ մի տղամարդու հետ, նոյն իսկ իր ամուսնու հետ օտարների ներկայութեամբ, իրաւունք չունի փողոց դուրս գալ զբօննելու, տղամարդկանց հասարակութեան մէջ երեալ և այլ սոյնանման բազմաթիւ երեսյթները հասցնում են նահապետական գերդաստանի հայ կնոջը գրեթէ ստրկական մի դրութեան, ուր թագաւորումէ իր ամուսնու բռնակալական իշխանութիւնը։ Եատ հետաքրքիր է այր մարդու ու կնոջ վոխադարձ յարաբերութիւնների նկարագրութիւնը Գանձակի ընտանեկան բարքերից, որ անում է պ. Ե. Լալայեանը։ Մի նկարագրութիւն, որի ներկայացրած պատկերը կը գտնենք ամենուրեք հայ նահապետական գերդաստանի շրջաններում։

Ամուսնանալով, աղջիկը կորցնում է իր ազատութիւնը, նրա երեսը այժմ թանձր քողով են ծածկում և մտցնում մի գերդաստանի մէջ, որի բոլոր անդամների հետ նա օտար է, որոնցից ոչ մինի հետ նա իրաւունք չունի խօսելու։ Այդ ճնշիչ դրութիւնը ինքը, նահապետական գերդաստանն էլ է զգացել, ուստի և սահմանել է, որ հարսնեղբայրները և կամ մօտիկ ազգականներից երկու պատանիներ ընկերակցում են հարսին և մնում են նրա մօտ երեք օր։ մինչև որ նա փաքը ինչ ընտելանում է սկեսրանց, սկսում է խօսել ամուսնու հետ։ Նա չի կարող բանալ իր բերանը և խօսել մի այլ սեռի, մի այլ

լսմբի անդամի հետ, որովհետև նահապետական կեանքը դերդաստանի անդամներին ըստ սեռի բաժանել է երկու խմբի, որոնց մէջ շատ քիչ հոգեկան կամ մտաւոր կապ կայ, յարաբերութիւն կայ: Տղամարդիկ առանձին են նստում, առանձին, կանանցից զատ և նրանցից առաջ են ուտում, խմում, իրենց տպաւորութիւններն ոչ թէ իրենց կանանց, այլ իրենց եղբայրներին, հօր պատմում, գործի վերաբերութեամբ դարձեալ տղամարդիկ միմեանց հետ են խորհուրդ անում: Ամուսինը մի տղամարդի ներկայութեամբ ամօթ է համարում որևէ նիւթի մասին խօսել իր կնոջ հետ, գգուել իր երեխային: Բացի դրանից տղամարդիկ կարծում են, թէ կանանց մազերը երկար են, խելքերը կարճ և այս պատճառով էլ նրանց կարծիքներին նշանակութիւն չեն տալիս, հետները չեն խորհրդակցում, իրենց դրութիւնը նրանց չեն պարզում: Կանոյք շատ անդամ անտեղեակ իրենց ամուսինների նիւթական դրութեան, այնպիսի պահանջներ են անում, որ նրանք չեն կարող կատարել, և փոխանակ պարզ խոստովանելու՝ զանազան պատճառներով մերժում են և շատ անդամ անբաւականութիւնների տեղիք տալիս»\*.

Նմանապէս և Զաւախքում ամուսնու «աչքում կինն ոչ այլ ինչ է, եթէ ոչ իւր կրքերին յագուրդ տուող մի ծախուած պուտուկ և մի ստրուկ աղախին» «Հօրդ ալ ինչի 100 մանէթ տուի, որ առ բանը չպիտի էնիս» ամուսնու սովորական խօսքերն են կնոջ մի որ և է աշխատանքից հրաժարուած միջոցին: Հայ գիւղացին շատ հեռու է կնոջը գգուելուց, նա օտարների և նոյն իսկ տանեցինների ներկայութեամբ թոյլ չի տալիս կնոջն իրեն հետ խօսելու, հետը հաց չի ուտում և առանձին խօսակցութիւն համարեա երբէք տեղի չի ունենում: Նա երբէք գրեթէ չի խորհրդակցում կնոջ հետ, տօներին ամօթ է համարում շնորհաւորելու և մի բան նուիրելու նրանու կինը գերդաստանի մէջ ևս մի առանձին յարգանք չի վայելում: Նա մինչեւ անդամ պար-

\* Ե. Լալայեան—Գանձակ գաւառը. Բ. հատ. Եր. 63.

տաւորուած է 10 տարեկան տեղեր հետ հարսնութիւն անել, չխօսելու նրան հրամայում են ոչ միայն կեսորարն, կեսուրը և ամուսինը, այլ և մեծ տեգերկնիկներն ու տեգերերը նա առանց կեսուրի թոյլտութեան ոտը մի քայլ անդամ՝ գուրս գնելու և կամ մի բան վերցնել ուտելու իրաւունք չունի» Այդ մարդու այդ տեսակ տիրապետական վերաբերմունքը դէպի իր կինը գտնում ենք նաև հայ կանոնական իրաւունքի և մանաւանդ Մխիթար Գօշի Դատաստանագրքի մէջ։ Այդ գաղափարն անշուշտ անցել է հայկական օրէնքների մէջ սովորութական իրաւունքի ազգեցութեան ներքոյ։ Մխիթար Գօշը շատ բնորոշ է արտայայտում այր մարդու տիրապետութիւնը կնոջ վրայ. «Զի ամենայնիւ իշխան լիցի այրն ի վերայ կնոջ որպէս յայլսն, նմանապէս և յամուսնանալն»\*.

Քանի որ կինն այր մարդու հետ համեմատելով զուրկ էր ընտանիքում որևէ իրաւունքներից, ակներեւ է որ նոյն այդ երեսյթը նշանակութիւն ունէր նաև հասարակական յարաբերութիւնների մէջ. կնոջ իրաւազուրկ անձն համարուելու մի հետաքրքիր փաստը կայանում էր նրանում, որ նա չէր կարող հանդէս գալ դատաստանի առաջ, նոյն իսկ իբրև վկայ։ Եթէ գուրս էլ գար, նրա ցուցմունքները չունին իրաւաբանական արժէք. Բորչալիի գաւառում, նոյն իսկ այն դէպքում, երբ կինը մօտիկ ազգական տղամարդ չունենալով ստիպուած է լինում իր շահերը պաշտպանելու համար զիւղական դատարանին կամ հասարակական ժողովին դիմելու, նրան հալածում է հասարակական կարծիքը, «անզգամ», աներեւ է կոչում, որ այնքան տղամարդկանց ներկայութեամբ կանգնում, խօսուում է\*\*. Այդ նոյն հայեացքը մտել է նաև Մխ. Գօշի Դատաստանագրքի մէջ. «Իսկ զկանայս ոչ է պարտ ընդունել վկայս, այլ արբանեակս վկայից»։ Եւ մեր հեղի-

\* Մխիթարայ Գօշի՝ Դատաստանագրիք Հայոց, մասն II, գլ. Ե.

\*\* Ե. Կալայեան—Բորչալիի դաւառ. Ազգաղթական հանգէս Խատ. էք. 125.

նակը իր այդ որոշումը փաստաբանում է հետեւեալ կերպով. ողի որպէս ոչ է նոցա քահանայ լինել կամ զինուոր և ոչ հնձան հարկանել և լստ կանոնաց ոչ ի շուկայ նստել և ոչ արանց հանդերձ զգենուլ, նոյնպէս և ոչ դատաստան առնել և ոչ վկայել»\*:

Սակայն Մխիթար Գօշը ուշադրութեան է առնում, որ կարող են պատահել այնպիսի դէպքեր, երբ միակ վկաները՝ կամ ականջալուր կամ ականատես՝ եղել են միմիայն կանայք։ Այս դէպքում մեր հեղինակը ստիպւած է ընդունել կանանց վկայութիւնը, բայց և միենոյն ատեն որոշ սահմանափակումներով, որոնք հաստատում են վերստին կնոջ իրաւական դրութեան ստորացրած աստիճանը։ Կին վկաների թիւը որևէ է դատաստանական ցուցմունքի համար պէտք է միշտ կրկնակի լինի, այսինքն երկու անդամ աւելի արու վկաների օրինական թերից, այն է 4—6 հոգի։ Ընդ սմին կին վկաները իրաւունք չունեն բնաւ անձամբ ներկայանալու դատարանի առաջ, այլ անհրաժեշտ ցուցմունքները պարտաւոր են տալ իրենց տանը նոյնքան թուով այր մարդկանց, որոնց առաքում է նրանց մօտ դատաւորը իր ընտրութեամբ. և ապա յիշեալ այդ մարդիկ, վերադառնալով դատարան, յայտնում են կանանցից լսած վկայութիւնները դատաւորին, որը և ընդունում է։

Կնոջ անձնական իրաւունքների այդ տեսակ ստորացրած դրութեանը մասամբ նպաստում է նաև այն հայեացքը, որ գերիշխում է ընդհանրապէս հայ նահապետական գերդաստանում։ Կինը հայ ժողովրդի կարծիքով մի անսուրբ արարած է։ Մանաւանդ անսուրբ է համարւում կինը դաշտանի ու ծննդաբերութեան ատեն։ Նարբայազէտի դաւառում «ծննդաբերութիւնից մինչև կնունքը թէ ծննդկանը, թէ նորածինը և թէ տատմերն ու մանկաբարձները (տատմօրը օգնող կանայք), անսուրբ են հա-

\* Մխիթար Գօշի Դատաստանագիրը Հայոց. հրատ. Բաստամեանի։ Նախադուռ ո՞ն, գլ. է, եր. 41։

մարտում, մարդիկ նրանց հետ շատ չեն շփւում, նրանց հետ հաց չեն ուտում, նրանց ձեռքից բան չեն վերցնում, և նոյն խոկ այն իրերը և ուտելեղէնները, որոնք նրանք ձեռք են տուել՝ պղծուած են համարում և չեն գործածում։ ուստի և սրանց համար առանձին ամաններ են պահում, որոնք յետոյ մեռնաջրով սրբում են։ Ծննդկանը սրբում է միայն այն ժամանակ, երբ «մեռն է գալիս տուն», այնպէս որ եթէ երեխան մեռած ծնուի կամ առանց մկրտուելու մեռնի՝ նա (ծննդկանը) անսուրբ կը համարուի, մինչև որ նոր որդի ծնի և մկրտել տայ»\*։ Նոյնանման հայեացք է իշխում ամենուրեք հայ ժողովրդի մէջ\*\*։ Այդ երեսյթը գոյութիւն ունի դրեթէ բոլոր ժողովրդ ների հայեացքներում և պրօֆեսուօր Մաքսիմ Կօվալեսկու ենթադրութեամբ պէտք է այսուղ պարփակուած լինի Զէնդ—Ավեստայի վարդապետութեան հետքերը, թէ կենդանի՝ օրդանիզմներից բաժանուած բոլոր մասերը համարում են անսուրբ, պիղծ, այսինքն բռնուած ու գերուած են չար ոյժերով։ Յիրաւի հայերի մէջ էլ եղունդի կտրած մասերը, նմանապէս և մազերի և այլն համարում են ուամկական հաւատալիքներով անսուրբ և պիղծ։ Եւ նայելով այդ հաւատալիքներին ժողովուրդը պէտք է այդ կտրած մասերը կամ թագէ գետնի մէջ կամ թագցնէ մի մութ տեղ, կամ այրէ և այլն։

## VIII

Քանի որ կնոջ անձնական իրաւունքները սահմանափակուած են հայ նահապետական գերդաստանի իրաւա-

\* Ե. Լալայեան—Նոր-Բայազէտի գաւառ-, Ազգագրական հանդէս։ 1907թ. XVI գերք, Եր., 38։

\*\* Սիսիան՝ Ե. Լալայեանի, Եր. 129։ Նոյնի—Վարանդա, Եր. 147։ Նոյն—Բորչալուի գաւառ-, Ազգագր. հանդէս IX հատ. Եր. 253 Նոյն—Լայոց ձոր, Ազգագրակ. հանդէս, հատ. XIV, Եր. 140։

բանական հայեացքների ներքոյ, ուր միայն հայրիշխանութեան սկզբունքն է տիրապետում, պարզ է, որ կնոջ վրայ նայում են իրեւ իրաւանց առարկայի, իրեւ մի անձի, որը ենթարկուած է իր մարդու բացարձակ իշխանութեանը։ Ամուսինը իր կնոջ խնամակալ գերն է ճանաչում։ Կնոջ այդ ստորացեալ անձնական դրութիւնը, անձնական իրաւաղրկութիւնը հայրիշխանական սկզբունքի տիրապետութեան մթնոլորդում ծագում է գլխաւորապէս այն հանգամանքից, որ կինը նոյն գերդաստանի ստացուածքի վերաբերմամբ միանգամայն իրաւաղուրկ է։ Մենք արդէն գիտենք, որ նահապետական գերդաստանը կազմուած է արենակից ազնատներից իրեւ մի տնտեսական համայնակեցութիւն, աշխատակցական կոլեկտիւ միաւոր, հետեապէս ակներեւ է, որ կինը օտար ցեղից, օտար արիւնից սերուելով և բացառապէս ամուսնական կեանքի համար, այսինքն որդիք ծնուելու նպատակով, բերուած լինելով իր մարդու գերդաստանը, անկարող է մասնակցել համայնական ընչքին ու սեփականութեան մէջ իրեւ բազկացուցիչ իրաւատէր, իրեւ այդ ստացուածքի տէր։

Ճիշտ է, կինը մասնակցում է իր ամուսնու հետ հաւասար ոյժերով գրեթէ գերդաստանի տնտեսական ամբողջ գործունէութեանը, մասնակից է իր աշխատանքով ընտանեկան համայնական ընչքի յաւելմանը ու անտեսական կեանքի բարելաւմանը, բայց նա այնտեղ հանդէս չի գալիս իրեւ այդ գերդաստանի աշխատակցական միութեան բազկացուցիչ համազօր անդամ, իրեւ համայնական մասնակից իրաւատէր ընդհանուր աշխատանքի արգասիքների։ Կինը իւր ամուսնու գերդաստանում լոկ աշխատաւոր ձեռք է և ուրիշ ոչինչ։ Նա մի աշխատաւոր է, որ ձեռք է բերուած գերդաստանի համար գրեթէ գնման եղանակով և պարտաւոր է աշխատել նոյն չափով, ինչպէս և այրմարդիկ։ Դարաբաղում գերդաստանի կանայք, բացի տնային աշխատանքներից, հանդիսանում են տղամարդկանց օգնականներ նաև գաշտային և դրսի այլ համանման

աշխատանքներում։ \* Գանձակի գաւառում կինը ի հարկէ կատարումէ բոլոր տնային աշխատանքները, որոնք մեծ գեր են խաղում գիւղացու շէնքում առաւելապէս ձմեռը, «իսկ տարուայ միւս եղանակներին նրա աշխատանքը կրկնապատկում է»,... Չնայելով, որ տան ամբողջ հարստութիւնն, ինչպէս ամուսնու, այնպէս և իր գառն աշխատանքի արդիւնքն է, բայց և այնպէս նա շատ էին իրաւունքներ ունի այդ ժամն մէջ» \*\*:

Սոկոյն կինը, չունենալով ոչ մի սեպհական ու տիրական իրաւունք իր ամուսնու գերգաստանի համայնական ընչքի ու ստացւածքի վերաբերմամբ և ճանաչուելով իրեւ ստար սերնդից միայն եկած ու մտած իր ամուսնու տունը, անշուշտ իր հօրական տնից բերած բոլոր իրերը շարունակում է համարել իր սեփականութիւն, որի վրայ, ինչպէս արդէն առիթ ենք ունեցել շեշտելու \*\*\*, ըստ սովորութական իրաւունքի չի տարածւում ընտանեկան համայնքի, նոյն իսկ իր ամուսնու իրաւասութիւնը կնոջ այդ բերած գոյըը չի կարող ուրեմն խառնուել ամուսնու գերգաստանի համայնական գոյքի մէջ, շահագործուել նրա անդամների ձեռքով։ Ի զուր չէ այդ գաղափարը ժողովուրդը տրտայայտում մի վերին աստիճանի բնորոշ առածով, թէ «կնկայ բերած փողը մայա չի գառնայ»։ Կնոջ արնագինը կամ օժիտը շարունակում են նրա սեփականութիւն համարուելու, կնոջ փողի վրայ իրաւունք չունի և նրա ամուսինը, եթէ բաժան չէ եղբայրներից» †։ Այս հետաքրքիր փաստը ապացուցանում է, թէ ինչ մեծ նշանակութիւն է ստացել հայ ժողովրդի իրաւական հայեացքներում հայրիշխանութեան սկզբունքը, որ միանգամայն այլ իրաւունքների մակերեսոյթի վրայ է գնում օտար գերդաստանից եկած, խորթ օջախից անջատուած կնոջը հան-

\* Зелинскій—Народно-Юридические обычаи армянъ Եր. 26:

\*\* Ե. Լալայեան—Գանձակի գաւառ, Եր. 65:

\*\*\* Տես սոյն յօդուածի IV գլուխը, «Արարատ» Եր. 264

† Ե. Լալայեան—Զաւախը, Եր. 179:

գերծ իւր շարժական գոյքով նահապետական գերդաստանը հեռացնելով իր համայնական սեփականութիւնից կնոջ արնագինն ու համանման փողերը, դրանով աւելի ևս ուժեղ է շեշտում, որ կինը իբրև սեփականատէր ընտանեկան համայնական գոյքի վերաբերեալ միանգամայն իրաւագուրկ է։ Հակառակ դէպքում իսպառ կը խախտուէր այն ագնատական սկզբունքը, որը հայրիշխանութեան անշողդողդ հիմքերից մէկն է, կը տապալուէր այն իրաւաբանական ըմբռնումն, թէ կինը չի պատկանում մարդու գերդաստանին իբրև համազօր բաղկացուցիչ սեփականատէր անդամ, թէ կինը գնմամբ կամ առևանգմամբ ձեռք բերուած մի աշխատաւոր, բանուոր ձեռք է։

Ահա այս իրաւաբանական յարաբերութիւնները, որոնք այնպէս խորն արմատացել են ժողովրդական սովորոյթների մէջ, իրենց ազդեցութիւնն են ունեցել նաև Միսիթար Գօշի Դատաստանագրքի վրայ, ուր ամուսնական ընչական յարաբերութիւնների վերաբերմամբ նշմարելի են նոյնանման իրաւական աշխարհայեացքի հետքեր։ Թէև հակառակ մեր ժողովրդի մէջ տիրապետող այն սովորոյթի, թէ արնագինը պատկանում է հարսին և գտնուում է նրա անմիջական տրամադրութեան ներքոյ, և թէև Միսիթար Գօշը անհրաժեշտ է գտնում, որ «Երեսաց տեսոյն և «պռոյգը պատկից յետոյ լինի «ի ձեռս առնն», այնուամենայնիւ կարելի է եղրակացնել, որ այդ գոյքի նկատմամբ կինը պահպանում էր տակաւին որոշ չափով իր սեփականատիրական իրաւունքները։ Յիրաւի Դատաստանագիրքը ոչ մի տեղ պարզ ու կտրուկ չի որոշում, թէ յընթացս ամուսնական կեանքի, այլն ինչ իրաւունքներ ունէր իր կնոջ ընչքի վրայ, արդեօք այլն ունէր լիազօր իրաւունքներ իր կամքի համեմատ կարգադրել կնոջից ստացած գոյքը, թէ սահմանափակուած էր լոկ նրանով, որ միայն կառավարէր ու անմիաս պահպանէր այդ։ Դատաստանագրքի մի քանի տեղերից կարելի է եղրակացնել, որ ամուսնու իրաւունքը կնոջ բերած ընչքի վերաբերմամբ որոշ սահմանափակումների էր ենթարկուած։ Խոկ թէ սահ-

մանափակումներ գոյութիւն ունէին, որոնք քիչ թէ շատ կասում էին ամուսնու լիազօրութիւնը կնոջ ընչքի վերաբերմամբ, պարզ արտայայտում է նրանից, որ Մխիթար Գօշը իւրաքանչիւր քայլափոխում կրկնում է, թէ ամուսնական լուծումների դէպքերում կնոջ բերած իրերը պէտք է անհրաժեշտ յետ յանձնուին իրեն։ Մինչև իսկ այնպիսի հանգմանքներում, երբ ամուսինը մեռնում է իւր հօր տանը, նա կարող է ազատորէն կարգադրել իւր ստացւածքը որևէ կտակով. մինչդեռ կնոջ իրերի վրայ ոչ մի կարգադրութիւն չի կարող անել, որովհետեւ իւր մահուանից յետոյ կնոջ բոլոր բերածը ի դէպս անդաւակութեան կրկին անցնում է կնոջը \*։ Նմանապէս եթէ կինը վախճանուի և ոչ մի զաւակ չը լինի, հանգուցեալ կնոջ բաժինն զատում է ամուսնու գոյքից և յանձնում է ազգկայծնողներին կամ եղբայրներին։ Իսկ եթէ կան զաւակներ, այն ատեն կնոջ «հոգու պէտքերու» համար անհրաժեշտ գումարը հանելով, մնացածը անցնում է զաւակներին \*\*։ Ուրեմն ամուսինը ոչ մի լիակատար իրաւունք չունէր կնոջ գոյքի վրայ, այլ քանի որ ամուսնական կապերի մէջ էր, նա հանգիսանում էր մի տեսակ կառավարիչ իր կնոջ բերած ընչքի։ Այդ ինչքը գտնուում էր մարդու տրամադրութեան ներքոյ, երեխ որևէ է մեզ անյայտ, սահմանագծած իրաւասութեամբ և այդ ինչքը նա պարտաւոր էր անվսաս պահել, եթէ ոչ շահագ ործել. ապա ամուսնութեանց լուծման դէպքերում վերադարձնել լիովին կնոջը։ Մենք արդէն առիթ ենք ունեցել յայտարարելու նաև մի փաստ, որ Դատաստանագիրը խօսելով եղբայրների բաժանման մասին պարզ որոշում է, թէ եղբայրները նախքան հայրենեաց տանից բաժանուելը, պիտի սկզբում որոշեն հարսների, այսինքն իրենց կանանց բաժինները, այ-

\* Մխիթար Գօշի Դատաստանագիրք Հայոց—հրատ. Վահան Տ. վ. Բաստամեանի. մաս. I յօդ. ձիթ։

\*\* Անդ. I մաս, յօդ. ձիթ։

նուհետեւ «յիւրաքանչիւրսն տայցեն և տպա ինքեանց հայրենեացն բաժանեն»\*:

Յամենայն գէպս Մխիթար Գօշի Դատաստանագրքի օրէնքներից կարելի է եզրակացնել, որ հակառակ ժողովրդական իրաւագիտակցութեանը մեր հոգեսր օրէնքու գէտների հայեացքներում սկսել էր արդէն ճանապարհ հարթել այն գաղափարը, թէ ամուսնու իրաւունքը, տանս մարին որոշ չափով տարածւում է նաև կնոջ սեփականութեան վրայ, նրան պատկանելիք գոյքի վրայ, եթէ ոչ լիակատար տիրապետելու, գոնէ ազատ օգտուելու սկզբունքներով։ Այդ տեսակ հայեացքով է տոգորուած վերոյիշեալ Դատաստանագրքի Ե. յօդուածի (Մասն Ա.) բովանդակութիւնը, ուր գրականապէս շեշտուում է, որ «Զայդոսիկ իրաւունս հաճոյս վարկաք դատաստանի, զի որպէս ոչ տիրէ ամուսնութեամբ կնոջն, մի լիցի իշխան ընչից նորա»։

Բոլոր վերոյիշերեալ փաստերը, պատկերացնելով կնոջ դրութիւնը հայ նահապետական գերդաստանում, որոշում են առաջի հայեացքից միմիայն հարսների իրաւական յարաբերութիւնները գէպի ընտանիքի այրմարդիկ, մանաւանդ գէպ իրենց ամուսիններն ու տանուտէրը։ Այդ իրաւական դրութիւնը կարծես չպէտք է վերագրուէր գերդաստանի նահապետի կնոջը, «մամը» «տատը», որը արտաքուստ աւելի լայն իրաւունքներով օժտուած է երկում համեմատաբար միւս կանանց հետ և առաջի հայեացքից կարծեօք իր ամուսնու հետ համահաւասար դիրք բռնած ունի ընտանիքի մէջ։ Մակայն դա առերեսոյթ է։ Նահապետի կնոջ այդ համեմատաբար արտօնեալ դրութիւնը կայանում է միայն ընտանիքի ներքին կառավարութեան ու տնտեսական ներքին գործունէութեան, այսինքն աշխատանքի դեկավարման մէջ, և այն էլ այնպիսի իրաւունքներ են, որոնք տարածւում են բացառապէս հարսների վրայ։ Բայց իր հասարակական-իրաւական դրու-

\* Մխիթար Գօշի Դատաստանագիրք, մաս II յօդ. ձլ.

թեամբ, իր սեփականատիւական իրաւունքներով ընտանեկան համայնական գոյքի վերաբերմամբ և դէպի իր ամուսինն՝ նահապետի անձնաւորութիւնը՝ ունեցած իրաւաբանական յարաբերութիւններով, նա ոչնչով չի տարբերւում միւս կանանցից։ Ըստ հայ սովորութական իրաւունքի նահապետի manus mariti-ն նոյնպէս տարածւումէ իր կնոջ գերգաստանի մամի, մեծ մօր վրայ, ինչպէս և տարածւում են միւս հարսների վրայ սրա և իւրաքանչիւր ամուսնու իրաւունքը։

Խ. Սամակիան.

(Նարունակելի)։